20821

373
G-63

1899

1213
1899. № 300.

ՆԵՐՍԻՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

*Կարդացուած* 1899 *ամի փետրուարի* 14-*ին*.

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР
ПЕЧАТЬ АЗIАТСКАГО МУЗЕУМА. SIG. MUS. ASIAT. C. A. 1818.
373
Ն-63
2010

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Շարաձէի և Ընկ., Նիկ. 21
1899

Б 2002

373
Ն-63

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Января 1899 г.

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

# 189$^7/_8$ ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻ

## I.

### ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

189$^7/_8$ ուսում. տարուայ սկզբում, նորեկ աշակերտների քննութիւններից առաջ, դպրոցում կային ընդամենը 462 աշակերտ։ Օգոստոսի 25-ին սկսուեցին վերաքննութիւնները, իսկ սեպտեմբերի 2-ին՝ նորեկ աշակերտների քննութիւնները։ Բազմաթիւ խնդրատուներից (որոնց թիւը հասաւ 515-ի) յաջողութեամբ քննութիւն տուեցին և ընդունուեցին 250 հոգի կամ 48,5$^0/_0$.

Այդպիսով ուսում. տարուայ սկզբում աշակերտների ընդհանուր թիւն էր 712։ Այդ թուից տարուայ ընթացքում պակասել են 36 հոգի, որոնցից միայն մէկն արձակուել է վատ վարքի պատճառով։ Ուրեմն տարուայ վերջը դպրոցում կային 676 աշակերտ։

Մինչև 189$^7/_8$ ուսում. տարին դպրոցում, բացի վեց հիմնական դասարաններից, կային 3-րդ և 4-րդ կոչուած պատրաստականներ իրանց զուգընթաց բաժանմունքներով։ Ի նկատի ունենալով, որ պատրաստականների թիւը չափազանց շատ էր, մանաւանդ որ 4 րդ պատրաստականի ծրագիրը նոյնն էր ինչ որ 1 դասարանինը և աշակերտները զուր կորցնում էին մէկ տարի, Հոգաբարձութիւնը որոշեց 189$^7/_8$ ուսում. տարուայ սկզբից փակել 4-դ պատրաստականը և դրա փո-

խարէն բաց անել Ա. բաժանմունք՝ անգրագէտ երեխաների համար։ Այդպիսով հաշուէտուութեան տարում կային վեց հիմնական դասարան և երեք պատրաստական, այն է. Ա. (անգրագէտների համար), Բ. (երկրորդ տարուայ ուսում) և Գ. (3-դ տ. ուսում)։ Դրանցից Ա. պատրաստականը ունէր մէկ զուգընթաց, իսկ Բ. և Գ. պատրաստականներից իւրաքանչիւրը 2 զուգընթաց բաժանմունք։

Հիմնական դասարաններից Ա, Բ, և Գ-ը ունէին զուգընթացներ, իսկ Դ, Ե և Զ զուգընթաց բաժանմունքներ չունէին։

Բոլոր 17 դասարաններում աշակերտները զետեղուած էին հետևեալ կարգով.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա և Ա զուգ. պատր. դասարանում | | | 100 | հոգի |
| Բ և Բ զուգ. | » | » | 151 | » |
| Գ և Գ զուգ. | » | » | 143 | » |
| Ա և Ա զուգ. դասարանում | | | 81 | » |
| Բ և Բ » | » | — | 63 | » |
| Գ և Գ » | » | — | 42 | » |
| Դ | » | — | 34 | » |
| Ե | » | — | 31 | » |
| Զ | » | — | 31 | » |

Գումար 676 աշակերտ

---

Գաղափար տալու համար, թէ որտեղացիք էին մեր աշակերտները, առաջ ենք բերում հետևեալ վիճակագրական տեղեկութիւնները.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Թիֆլիս քաղաքից. | . | 305 | հոգի | կամ | 45,1 °/₀ |
| Թիֆլիսի նահանգից | . | 146 | » | » | 21.6 » |
| Երևանի » | . | 76 | » | » | 11,2 » |
| Գանձակի » | . | 69 | » | » | 10,2 » |
| Քութայիսի » | . | 8 | » | » | 1,2 » |

ՊԵՏ. ԿԱՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
36325-66



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Բագուայ նահ. և Դաղստ. | | 5 | » | » | 0,7 » |
| Ղարսի վիճակ | . | 2 | » | » | 0,3 » |
| Հիւս. Կովկ., Ղրիմ, Բես. | | 5 | » | » | 0,7 » |
| Տաճկաստանից. | . | 49 | » | » | 7,3 » |
| Պարսկաստանից | . | 11 | » | » | 1,6 » |

Այդպիսով ուրեմն աշակերտ. մեծամասնութիւնը (66,8°/₀) նախկին տարիների պէս Թիֆլիսից և Թիֆլիսի նահանգից էին։

ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՉՈՒՄԸ

Ըստ ծնողների կոչման՝ աշակերտները բաժանւում էին հետևեալ կարգերի.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. Արհեստաւորների որդիք. | | 226 | հ. | կամ | 33,3 °/₀ |
| 2. Վաճառականների | » | 223 | » | » | 32,9 » |
| 3. Հոգևորականների | » | 67 | » | » | 10. » |
| 4. Ստորին ծառայողների | » | 88 | » | » | 13,1 » |
| 5. Երկրագործների | » | 63 | » | » | 9,4 » |
| 6. Ատիճանաւորների | » | 5 | » | » | 0,7 » |
| 7. Ուսուցիչների | » | 4 | » | » | 0,6 » |

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

| Դասարաններ | Աշակերտ. թիւը | Փոխւում են | Մնում են |
|---|---|---|---|
| Ա և Ա, գ. պատր. | 100 | 69 կամ 69, °/₀ | 31 կամ 31, °/₀ |
| Բ և Բ զուգ. » | 151 | 98 » 65, » | 53 » 35, » |
| Գ և Գ զուգ » | 143 | 87 » 60,9 » | 56 » 39,1 » |
| Ա և Ա գ. դաս. | 81 | 56 » 69, » | 25 » 31, » |
| Բ և Բ գ. » | 63 | 43 » 68,2 » | 20 » 31,8 » |
| Գ և Գ գ. » | 42 | 28 » 66,7 » | 14 » 33,3 » |
| Դ դաս. » | 34 | 24 » 73,6 » | 10 » 26,4 » |
| Ե դաս. » | 31 | 21 » 67,7 » | 10 » 32,3 » |
| Զ դաս. » | 31 | 30 » 97,7 » | 1 » 2,3 » |
| | 676 | 456 » 67,4°/₀ | 220 » 32,6°/₀ |

50677-Ա.Հ.

Այդպիսով դպրոցի 676 աշակերտից փոխադրուել և աւարտել են 456 հոգի կամ 67,4 %
Մնացել են 220 » » 32 6 »

### ՈՐԴԵԳՐՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

20 Որդեգրից՝
Փոխադրուել և աւարտել են բոլորը։

### ԱՇԱԿԵՐԻՆԵՐԻ ՎԱՐՔԸ

Աշակերտների վարքը արտայայտւում էր հետևեալ թուերով։

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 ստացել են | վարքից | | 629 | հոգի | կամ | 93 % |
| 4 | » | » | » 44 | » | | 6,5 » |
| 3 | » | » | » 3 | » | | 0,4 » |

$189^{6}/_{7}$ ուսում. տարուայ համեմատութեամբ՝ 5 ըստացողների տոկոսը հաշուետուութեան տարում աւելի փոքր է եղել ($189^{6}/_{7}$ թ. 5 ստացողների % եղել է 98)։

### ԲԱՑԱԿԱՅՈՂՆԵՐ

$189^{7}/_{8}$ ուսումնական տարում աշակերտների բացակայութիւնները աւելի ևս պակասել են. $189^{5}/_{6}$ ուս. տարում ամեն մէկ աշակերտի գալիս էր 46 բաց թողած դաս, $189^{6}/_{7}$ ուս. տարում—35 բաց թողած դաս, իսկ հաշուետուութեան տարում ամեն մէկ աշակերտի գալիս է ընդամենը 32,3 բաց թողած դաս։

---



### ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ ԴԱՍԵՐԻՑ ԴՈՒՐՍ

$189^{7}/_{8}$ ուսումնական տարում տեղի ունեցան նոյն թուով գրականական երեկոներ, ինչպէս և նախորդ տարին։ Գրականական երեկոների նիւթերը եղել են հետևեալ խնդիրները։

1. Վահան Մամիկոնեանի տիպը՝ ըստ Ղազար Փարպեցու պատմութեան, ղեկավարել է ուսուցիչ պ. Ստ. Մալխասեան։

2. Ֆրանսիական մեծ յեղափոխութեան պատճառները՝ ըստ Թէնի, ղեկ. ուսուցիչ պ. Ե. Լալայեան։

3. Վէրք Հայաստանի—քննադատութիւն—ղեկավարել է ուս. պ. Ս. Լիսիցեան.

4. Զրադաշտական կրօնը, նրա ծագումը և նշանակութիւնը ղեկ. է ուսուցիչ. պ. Ե. Լալայեան։

5. Սելճուկեան թուրքերի արշաւանքը Հայաստան՝ ըստ Արիստակէս Լաստիվերտցի պատմագրի, ղեկ. պ. Մ. Ասիլեան։

6. Նման և տարբեր գծեր հայոց հին և նոր գրականութեան սկզբնաւորութեան մէջ. ղեկ. է պ. Ս. Մալխասեան։

7. Արծրունեաց ցեղի ծագումը և պատմութիւնը՝ ըստ Թովմայ Արծրունի պատմագրի, ղեկ. է պ. Մ. Ասիլեան։

8. Եգիպտոսի քաղաքակրթութիւնը. ղեկ. է պ. Ե. Լալայեան։

9. Արքայ Լիր Շէքսպիրի ղեկ. է պ. Ս. Լիսիցեան։

---

Բացի այդ, տօներին մեծ աշակերտների համար կազմուել են աշակերտական ներկայացումներ, իսկ փոքրերի համար կազմուել է գրականական առաւօտ և

ցոյց են տրուել պատկերներ մոգական լապտերով։

Կատարուել է նոյնպէս աշակերտական զբօսանք դաստիարակների հսկողութեան տակ (երկու դասարան)։

Տարուայ ընթացքում կատարուել են հետեւեալ դպրոցական աշակերտական հանդէսները․

1․ Վեհափառ Կաթուղիկոսի օծման տարեդարձին

2․ Ս․ Թադէոսի և Բարդուղիմէոսի տօնին

3․ Վարդանանց տօնին։

## ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախկին տարիների պէս դպրոցը աշխատել է որքան հնարաւոր է, օգնել չքաւոր աշակերտներին, պահելով որդեգրներ և թոշակառուներ, ձրի ճաշ կամ գրքեր տալով, ուսման պիտոյք, շորեր և դեղեր բաժանելով։

1․ Թոշակառուների թիւը 56 էր, որոնց վրայ ամբողջ տարուայ ընթացքում դպրոցը ծախսել է 4,278 ր․ 80 կ․ ($189^{6}/_{7}$ ուս․ տարում ծախսուել է 4034 ր․ 44 կ․)

2․ Նախկին տարիների պէս՝ դպրոցը ձրի ճաշ է տուել 20 չքաւոր աշակերտի (բացի որդեգրներից)։ Դրանց կերակրելը դպրոցին նստել է 984 ր․ 28 կ․

3․ Դպրոցը իւր միջոցներից ծախսել է 230 ր․ գնելով հագուստ չքաւոր աշակերտների համար կամ միանուագ օժանդակութիւն տալով նրանց։

4․ Բարերար անձերից նուիրած գումարներից չքաւոր աշակերտներին օժանդակութիւն է տրուած 477 ր․ 58 կ․

5․ Բագուայ Մարդասիրական ընկերութեան ուղարկած գումարի մնացորդը 183 ր․ նոյնպէս բաժանուած է չքաւոր աշակերտներին (Մարդասիրական ընկերութեան գումարը 300 րուբլի էր, որի մի մասը նախորդ տարին էր ծախսուած)։



6․ Թիֆլիսի Հ․ Բարեգործական Ընկերութիւնը իւր միջոցներից ծախսել է մեր աշակերտների համ․ 1500 ր․

Այդպիսով մեր դպրոցի չքաւոր աշակերտները $189^{7}/_{8}$ ուս․ տարում 7,653 ր․ 66 կ․ օժանդակութիւն են ստացել։ Այս գումարից 5,493 ր․ 8 կ․ դպրոցը ծախսել է իւր միջոցներից ($189^{6}/_{7}$ ուս․ տարում ծախսել էր 5,407 ր․ 19 կ․)։

Այս հաշուի մէջ չեն մուծուած այն ծախսերը, որ դպրոցը արել է 20 որդեգրի պահպանութեան համար։

## ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Հիւանդ աշակերտների բժշկութիւնը կատարուել է նախկին տարուայ ձեւով, այսինքն դպրոցի բժիշկը շաբաթը 3 անգամ յաճախել է դպրոց և ընդունել բոլոր հիւանդ աշակերտներին՝ թէ որդեգրներին և թէ երթևեկներին։ Կարիք եղած ժամանակ հիւանդ աշակերտներին բժիշկը ընդունել է իւր բնակարանում, իսկ այն դէպքերում, երբ հիւանդութիւնը ծանր է եղել, բժիշկը այցելել է ծանր հիւանդներին նրանց բնակարաններում։ Մէկ տարուայ ընթացքում բժշկական օգնութիւն է հասցրած 712 դէպքում։ Ըստ բժ․ Արծրունու տեղեկութիւնների՝ այդ բոլոր հիւանդութիւնները կարելի է հետևեալ տեսակների բաժանել։

1․ Ջերմ և մալեարիա . . . 132 դէպք․

2․ Ընչառութեան գործարանի հիւանդութիւններ, բրոնխիտ, կատարր և այլն. . . 182 »

3. Ստամոքսի և աղիք. խանգարում 121 »
4. Արեան պակասութիւն . . 58 »
5. Աչքի հիւանդութիւններ . 40 »
6. Գլխացաւ . . . . 19 »
7. Նեարդային տկարութ. . . 16 »
8. Ականջի հիւանդութիւն . . . 16 »
9. Վէրքեր . . . . 17 »

Եւ այլն

Պ. բժշկի կարծիքով այդ հիւանդութիւնները հետեւանք են հետեւեալ աննպաստ պայմանների. 1) անբաւարար սննդի, 2) խոնաւ բնակարանների և 3) տաք հագուստ չունենալու։ Յայտնի բան է, այդ նկատողութիւնը վերաբերում է երթևեկ աշակերտներին և ոչ թէ որդեգրներին։ Երթևեկ աշակերտների կեանքի պայմանները իրաւ չափազանց աննպաստ են. չնայած որ դպրոցը բաւական խոշոր գումար է ծախսում չքաւորների համար, բայց և այնպէս հնարաւոր է լինում օգնութիւն հասցնել համեմատաբար միայն քչերին, չքաւորների մեծագոյն մասը մնում է առանց օժանդակութեան։ Չքաւորութիւնը ծանր հետեւանքներ է ունենում աշակերտների առողջութեան նկատմամբ, որ և ապացուցւում է վերոյիշեալ թուերով։

## ԳՐԱԴԱՐԱՆ

Անցեալ տարուայ տեղեկագրի մէջ յայտնել էի, որ առ 1 յունուարի 1898 թուի գրադարանում կային ընդամենը 2914 անուն գիրք, որոնք բաղկացած էին 3237 հատորից և արժէին 14327 ռ. 98 կ.։ Հաշուետուութեան տարում աւելացել են 185 անուն գիրք, բաղկացած 322 հատորից՝ արժողութեամբ 389 ռ. 21 կ։



Բացի այդ, հաշ. տարում դպրոցը նուէր ստացաւ պ. Մ. Փանեանցից 3 արկղ ընտիր գրքեր՝ հայերէն և օտար լեզուներով։ Այդ գրքերը դեռ գնահատուած չեն։ Նոյնպէս դեռ գնահատուած չեն պ. Ար. Մարկոսեանի նուիրած գրքերը։

Բացի այդ՝ գրադարանում կայ 32 կտոր ձեռագիր։

## $189^{7}/_{8}$ ՈՒՍ. Տ. ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐԸ.

| | | |
|---|---|---|
| 1. | Աբէլեան Պօղոս | Ախալքալաքցի |
| 2. | Աղաբաբեան Յակոբ | Ղազախեցի |
| 3. | Բասմաճեան Հմայեակ | Ալաշկերտցի |
| 4. | Բէրինեան Բուղդան | Թիֆլիսեցի |
| 5. | Գրիգորեան Սիրական | Աբարանցի |
| 6. | Դանիէլեան Պօղոս | Զարդախ. (Գանձ. գ.) |
| 7. | Դաշտոյեան Ռուբէն | Ն. Բայազիտցի |
| 8. | Երզնկեան Արամայիս | Հաղպատեցի |
| 9. | Երուանդեան Արշակ | Թիֆլիսեցի |
| 10. | Զաքարեան Հրաչեայ | Խնուսցի |
| 11. | Թոնեան Արտաշէս | Շուշեցի |
| 12. | Ղարիբեան Վարդան | Թիֆլիսեցի |
| 13. | Մանանդեան Արսէն | Ախալցխացի |
| 14. | Մանուէլեան Վիկտոր | Ագուլեցի |
| 15. | Մելիք-Ղազարեան Գարեգին | Գեչալուեցի (Էջմ.) |
| 16. | Մելիք-Յակոբեան Արշակ | Սալմաստեցի |
| 17. | Մկրտչեան Աղէքսանդր | Խնուսցի |
| 18. | Մնջոյեան Սեդրակ | Ալէքսանդրապօլցի |
| 19. | Պալաքեան Տիրան | Թոխատցի (Տաճկ.) |
| 20. | Պետրոսեան Յարութիւն | Գանձակեցի |
| 21. | Պետրոսեան Յովհաննէս | Հ. Նախիջևանցի |
| 22. | Ռշտունի Գաբրիէլ | Ագանացի |

23. Սիմէօնեան Արսէն Թիֆլիսեցի
24. Տէր-Ենովքեան Խաչատուր Թիֆլիսեցի
25. Տէր-Մելիքսեդեկեան Տիգրան Ղազախեցի
26. Տէր-Մինասեան Լեւոն Ալաշկերտցի
27. Տէր-Յակոբեան Աբիսողոմ Ախալքալաքցի
28. Տէր-Նահապետեան Մարտիրոս Ախալցխացի
29. Քաջազնունի Պետրոս Ախալքալաքցի
30. Օրդուխանեան Գէորգ Մոզդոկեցի։

II.

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

| Ուսուցիչների ազգանունները | Ո՞ր դպրոցում և ե՞րբ է աւարտել ուսումը. | Ո՞ր թ. է ծառայում ներս. դպր. | Ի՞նչ առարկայ է աւանդում. |
|---|---|---|---|
| Բալադեան Սամուէլ տեսուչ | Օդեսայի համալսարան 1889 | 1895 | Բուսաբանութ և բնախօսութ. |
| Աբուլեան Գալուստ քահանայ | Ներսիսեան դըպրոց 1883 | 1887 | Երգեցողութիւն |
| Ալխազեան Յարութիւն | Թիֆլիսի Ա. գիմնազիօն 1870 | 1887 | Ռուսաց լեզու |
| Ազանեան Գրիստա. քահանայ | Ներսիսեան դըպրոց 1873 | 1876 | Կրօն և Տօմար |
| Ասիլեան Միսաք. | Գէորգեան ճեմարան 1881 | 1886 | Հ. լեզ. Հ. պատ. և եկեղ. պատմ. |
| Բագրատունի Ար. քահանայ | Խալիպեան դըպ. (Ե դաս) 1864 | 1897 | Կրօն |
| Բարխուդարեան Գէորգ | Դորպատի համալ. (Ա լսարան) | 1876 | Ռ. պատ և Ռ. աշխարհագր. |
| Դաղբաշեան Յարութիւն | Ներս. դպ. և Տիւբինգէնի հ. 1893 | 1894 | Ուսումն ս. Գրոց և եկեղ. պատմ. |
| Եկմալեան Մակար | Պետերբ. կոնսերվատորիա 1887 | 1891 | Եկեղ. երգեցողութիւն |
| Զօհրաբեան Յար. | Կիեւի համ. 1883 | 1886 | Մաթեմատիկայ |
| Թիւսիկեան Լեւոն | Ներս. դպր. և Պետերբ. համ. 1873 | 1873 | Թուաբ. կենդան. և ֆիզ. աշխար. |
| Լալայեան Երուանդ | Ներս. դպ. և Ժընեւի համ. 1895 | 1897 | Ֆրան. լ. Հ. պատ. և Ընդ. պատ. |
| Լիսիցեան Ստեփ. | Վարշ. համ. 1889 | 1894 | Հ. և ընդհանուր պատ. Ռ. լեզու |

| | | | |
|---|---|---|---|
| Հովուեան Պօղոս | Ներ. դպ. և Գէորգ. ճեմ. 1889 | 1897 | Թուաբանութիւն |
| Մալխասեան Ստեփան | Գէորգ. ճեմ. և Պետ. համ. 1889 | 1890 | Հայոց լեզ. և Հ. մատենագրութ. |
| Մանդինեան Ամիրան | Լազարեան ճեմար. 1869 | 1870 | Ընդհանուր աշխարհագրութիւն |
| Մելիք-Ալլահվերդեան Աշէք. | Մոսկուայի համալսարան 1886 | 1888 | Ֆիզիքա և հանրահաշիւ |
| Միրաղեան Գեդէոն | Թիֆլ. Ա. գիմ. (Զ դաս.) 1883 | 1897 | Ռուսաց լեզու և գծագրութիւն |
| Միրզոյեան Գաբրիէլ | Կազանի համալս. (Գ լսարան) | 1882 | Ռուսաց լեզու |
| Մուրադբէկեան Աղէքսանդր | Ներսիսեան դպրոց 1892 | 1897 | Հ. լեզու և երգեցողութիւն |
| Յարութիւնեան Իսահակ | Ներս. դպր. և Ենայի համ. 1888 | 1888 | Հ. լեզ. հոգեբ. և տրամաբան. |
| Յովհաննիսեան Տիգրան | Մոսկուայի համալսարան | 1897 | Ռուսաց լեզու |
| Ճահբուդաղեան Գրիգոր | Ներս. դպր. 1879 | 1880 | Հայոց լեզու |
| Ճամշինեան Յար | Պետ. գեղ. ճեմ. | 1884 | Նկարչութիւն |
| Պարոն Սարգըսեան Աղէք. | Պետերբ. համալ. | 1897 | Թուաբանութիւն |
| Պռօշեան Պերճ | Ներս. դպ 1855 | 1887 | Կրօն |
| Սահակեան Սահակ քահանայ | Ներ. դպ. և Լայպցիգի համ. 1883 | 1883 | Կրօն |
| Սպարապետեան Արշակ | Ներսիսեան դպրոց 1882 | 1882 | Գծագրութիւն |
| Սունդուկեան Յովհաննէս | Թիֆլիսի րէալական դպր. 1883 | 1897 | Ռուսաց լեզու |
| Փիրումեան Տիգ. | Ներ. դպր 1879 | 1894 | Հայոց լեզու |
| Քերէստէճեան Մարտիրոս | Խալիպեան ուսում. 1859 | 1887 | Գեղագրութիւն |

Ծանօթ. Հ. Աղանեանի և Սահակեանի, պ.պ. Միրզոյեանի, Բարխուդարեանի և Թիւսիկեանի ծառայութիւնը սկսուելով վերոյիշեալ թուականներից, ընդհատուել է և զանազան ժամանակամիջոցներից յետոյ նորից սկսուել։



Վերակացուի պաշտօն կատարում էին. պ. պ. Գր. Տէր Յարութիւնեան, Ա. Սպարապետեան, Պ. Հովուեան և Դ. Տէր Դաւթեան,

---

Հաշուետուութեան տարում ուսուցիչներից մէկը՝ Ն. Տէր Յարութիւնեանը հեռացաւ դպրոցից հիւանդութեան պատճառով։ Միւս կողմից հրաւիրուեցան ուսուցչական պաշտօնի համար հ. Արս. Բագրատունին, պ. պ. Տ. Յովհաննիսեանը, Ե. Լալայեանը, Ա. Մուրադբէկեանը, Գ. Միրաղեանը, Յ. Սունդուկեանը և Ա. Պարոն Սարգսեանը։

---

Գաղափար տալու համար, թէ ինչպէս են յաճախել դասերին ուսուցիչները առաջ եմ բերում հետեւեալ ցուցակը, որից երեւում է, թէ մեր դպրոցի ուսուցիչները սեպտեմբերից սկսած՝ քանի դաս պէտք է պարապէին, որքան դաս են բաց թողել և այլն։ Տեղեկութիւնները առաջ են բերուած ամբողջ տարուայ նկատմամբ։ Դասեր բաց թողնելու պատճառները եղել են՝ հիւանդութիւն, ընտանեկան գործեր, դատարան կանչուելը և այլն։

| ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱԶԳ. ԱՆՈՒՆՆԵՐ | Ո՞րքան դաս պէտք է պարապէր | Աւել. պարապ. դաս. | Չպարապած դաս. թ. | Ընդամէնը ո՞րքան դաս է պարապել | Չպարապած դաս. թ. արտայայտուած $^0/_0$ | Քանի՞ անգ. է ուշաց. |
|---|---|---|---|---|---|---|
| Տեսուչ Բալայեան Սամ. | 149 | 6 | 1 | 154 | 0,7 | — |
| Արուլեան Գալուստ քահ. | 329 | — | 11 | 318 | 3,3 | 10 |
| Ալխազեան Յարութիւն | 654 | — | 40 | 614 | 6,1 | 4 |
| Ադամեան Գիւտ ա. քահ. | 237 | — | 28 | 209 | 11,8 | 28 |
| Ասիլեան Միսաք | 590 | — | 13 | 577 | 2,2 | 4 |
| Բագրատունի Արսէն քահ. | 92 | — | 13 | 79 | 14 | — |
| Բարխուդարեան Գէորգ | 265 | — | 4 | 261 | 1,5 | 6 |
| Դաղբաշեան Յարութիւն | 499 | 1 | 8 | 492 | 1,6 | 5 |
| Եկմալեան Մակար | 573 | — | 35 | 538 | 6,1 | 3 |
| Զոհրաբեան Յարութիւն | 64[illegible] | 1 | 4 | 640 | 0,6 | 6 |
| Թիսփկեան Լեւոն | 668 | 16 | 2 | 682 | 0,3 | 1 |
| Ղալայեան Երուանդ | 406 | 53 | 1 | 458 | 0,3 | 5 |
| Լիսիցեան Ստեփան | 551 | — | 18 | 533 | 3,3 | 13 |
| Հովուեան Պօղոս | 214 | 16 | 4 | 226 | 1,9 | — |
| Մալխասեան Ստեփան | 546 | 1 | 12 | 535 | 2,2 | — |
| Մանդինեան Ամիրան | 432 | 4 | 21 | 415 | 4,9 | 34 |
| Մելիք Ալլահվերդեան Աղ | 140 | 1 | 12 | 129 | 8,6 | 2 |
| Միրաքեան Գեդէոն | 271 | 1 | 4 | 268 | 1,5 | 1 |
| Միրզոյեան Գաբրիէլ | 545 | 2 | 109 | 438 | 20 | 1 |
| Մուրադբէգեան Աշէք | 268 | 6 | 5 | 269 | 1,9 | 5 |
| Յարութինեան Իսահակ | 523 | 1 | 4 | 520 | 0,8 | 1 |
| Յովհաննիսեան Տիգրան | 202 | 1 | 13 | 190 | 6,4 | 18 |
| Ճահբուդաղեան Գրիգոր | 544 | — | 37 | 507 | 6,8 | 14 |
| Ճամչինեան Յարութիւն | 315 | — | 40 | 275 | 12,7 | 4 |
| Պարոն-Սարգսեան Աշէք. | 109 | 3 | — | 112 | — | — |
| Պռօշեան Պերճ | 609 | — | 33 | 576 | 5,4 | — |
| Սահակեան Սահակ քահ. | 161 | 2 | 10 | 153 | 6,[illegible] | — |



| ԱՆՈՒՆՆԵՐ ԵՒ ԱԶԳ. ԱՆՈՒՆՆԵՐ | Ո՞րքան դաս պէտք է պարապէր | Աւել պարապ. դաս. | Չպարապած դաս. թ. | Ընդամէնը ո՞րքան դաս է պարապել | Չպարապած դաս. թ. արտայայտուած $^0/_0$ | Քանի՞ անգ. է ուշաց. |
|---|---|---|---|---|---|---|
| Սունդուկեան Յովհաննէս | 496 | — | 61 | 435 | 12,3 | 2 |
| Սպարապետեան Արշակ | 323 | 5 | 24 | 304 | 7,4 | — |
| Փիրումեան Տիգրան | 651 | — | 9 | 642 | 1,4 | — |
| Քէրէստէճեան Մարտիրոս | 590 | — | 35 | 555 | 5,9 | — |
| Ընդամէնը . . | 12595 | 120 | 611 | 12105 | 4,9 | 167 |

36325-66

Աղիւսակից երեւում է, որ ամբողջ տարուայ ընթացքում բոլոր ուսուցիչները պէտք է 12,595 դաս պարապէին։ Բոլորը միասին ամբողջ տարուայ ընթացքում բաց են թողել 611 դաս, որ կազմում է 12595 ի $4{,}9\,^0/_0$. իսկ եթէ չպարապած դասերի թուից հանենք աւելորդ պարապած դասերը այն ժամանակ տոկոսը կարտայայտուի աւելի եւս փոքր թուով, այն է $3{,}9\,^0/_0$.

Համեմատութեան համար նկատենք որ $189^6/_7$ ուս. տարում բաց թողած դասերը կազմում էին դասերի ընդհանուր թուի $5{,}74\,^0/_0$. այդպիսով հաշուետուութեան տարում բաց թողած դասերի թիւը համարեա մէկ ամբողջ տոկոսով պակաս է նախորդ տարուանից։

$189^7/_8$ ուսումնական տարում պարապմունքները սկսուել են սեպտեմբ. 1-ից եւ վերջացել են յունիսի 2-ին։



Библиотека Института Востоковедения Академии Наук СССР
Гос Библиотека ՀՍՍՌ-Арм. ССР им. А. Мясникяна

## ՄԱՆԿԱՒԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎ

$189^7/_8$ ուս. տարուայ ընթացքում մանկավարժական խորհուրդը ունեցել է 24 նիստ։ Նիստերին միջին թուով ներկայ են եղել 21 անդամ։ Բոլոր նիստերին ներկայ են եղել պ.պ. Բալաղեան և Թիւսիկեան։

Բացակայ են եղել նիստերին.

| | | | |
|---|---|---|---|
| 1 | անդամ | պ.պ. | Մալխասեան, Միրաղեան և Յարութիւնեան։ |
| 2 | » | հ. | Աբուլեան, պ.պ. Ղալայեան և Փիրումեան։ |
| 3 | » | պ.պ. | Ասիլեան, Լիսիցեան և Մուրադբէկեան։ |
| 4 | » | » | Ալխազեան և Ջոհրաբեան։ |
| 5 | » | հ. | Սահակեան։ |
| 8 | » | պ.պ. | Դաղբաշեան, Մանդինեան, պարոն Սարգսեան և Սունդուկեան։ |
| 9 | » | » | Բարխուդարեան և Միրզոյեան։ |
| 11 | » | » | Յովհաննիսեան և Սպարապետեան։ |
| 13 | » | » | Պռոշեան և Տախբուդաղեան։ |
| 15 | » | պ. | Եկմալեան։ |
| 16 | » | » | Հովուեան և Տամշինեան։ |
| 17 | » | » | Մելիք Ալլահվերդեան։ |
| 19 | » | հ. | Բագրատունի։ |
| 20 | » | » | Աղանեան և պ. Քէրէստէճեան։ |

Մանկավարժական ժողովների խորհրդածութեան նիւթ եղել են հետևեալ խնդիրները.

1. Նորեկ աշակերտների ընդունելութիւնը։

2. Ընտրութիւն ուղեգրների, թոշակառուների և ճաշողների.

3. Աշակերտների խաղերը կանոնաւորելու խնդիրը.



4. Աշակերտների առաջադիմութեան և վարքի վերաբերեալ խնդիրները.

5. Մրցանակի արժանի աշակերտների ընտրութիւնը։

6. Ծրագրի բարեփոխութեան խնդիրը

7. Աշակերտների քննութիւնների վերաբերեալ խորհրդածութիւն և այլն։

*Տեսուչ՝ Սամուէլ Բալաղեանց։*

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇԻՒ

*Ներսիսեան Հայոց հոգեւոր դպրոցի վասն 1897 ամի.*

### 1. ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

#### Ա. ՄՈՒՏՔ

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| 1. Անշարժ կալուածքներից . . . | 44381 | 13 |
| 2. Ապառիկ : . . . . | 2472 | 87 |
| 3. Մոմավաճառութիւնից . . . | 6700 | — |
| 4. Ուխտատեղիներից . . . | 8145 | 63 |
| 5. Անակընկալ մուտք . . . | 2034 | 93 |
| 6. Անձեռնմխելի և յանուն շինութեան եղած գումարներից տոկոսներ . . . | 7000 | — |
| | 70734 | 56 |

#### Բ. ԾԱԽՔ

| | | |
|---|---|---|
| 1. Ռոճիկ և կենսաթոշակ ուսուցչաց ու ծառայողաց . . . . . | 39762 | 79 |
| 2. Դասական գրքերի, գրադարանի և ֆիզիքական կաբինէտի համար . . | 853 | 43 |
| 3. Կահ. կարասիք և վերանորոգութիւն կահուց կարասեաց . . . . | 1545 | 71 |
| 4. Սնունդ որդեգրաց և չքաւոր աշակերտաց. . . . . . | 2712 | 36 |



| | | |
|---|---|---|
| 5. Թոշակադրամ չքաւոր աշակերտաց | 4286 | 30 |
| 6. Հանդերձեղէն և կօշիկ որդեգրաց | 726 | 86 |
| 7. Բաղանիք, դեղորայք և զուարճութիւն աշակերտաց. . . . . | 311 | 98 |
| 8. Վառելափայտ, քարածուխ և վառելանաւթ. . . . . | 888 | 50 |
| 9. Ջուր . . . . . | 134 | 20 |
| 10. Դիւանական և դասական պիտոյք, լրագրներ և ամսագրեր . . | 1292 | 48 |
| 11. Հարկ ապահովութեան կալուածոց | 3091 | 17 |
| 12. Վերանորոգութիւն կալուածոց և մաքրութիւն փողոցաց . . . . | 4668 | 92 |
| 13. Հոգեհանգիստ բարերարաց. . | 660 | 92 |

#### Գ. ԾԱԽՔ ՈՒԽՏԱՏԵՂԵԱՑ

| | | |
|---|---|---|
| 14. Ռոճիկ վանահարց, գին մոմոց եւայլն | 4386 | 31 |
| 15. Գրելոյ 75-ամեայ պատմ. դպրոցիս | 697 | 34 |
| 16. Վարձ Մելիքեանցի տան համար ուր զետեղուած է որդեգրների ննջարանը. | 550 | — |
| 17. Անակընկալ ծախք . . . | 1080 | 7 |
| | 67661 | 34 |
| Մուտքը ծախքից աւելանում է՝ . | 3073 | 22 |

### Բ. ԳՈՒՄԱՐ ՅԱՆՈՒՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ

| | | |
|---|---|---|
| Ա. Առ 1-ն յունուարի 1898 ամի կար | 46013 | 32 |
| Բ. Ծախք 1898 ամի. | | |
| 1. Հանգուցեալ իշխան Յովսէփ Արղութեան Երկայնաբազուկի Դպրոցին նուիրած տան հիմնական վերանորոգութեան համար. | 10050 | 55 |
| 2. Շինութեան սենեկաց վասն ուխտաւորաց ի Թէլէթ . . . | 7161 | 18 |
| | 17211 | 73 |

Առ 1-ն յունուարի 1899 ամի մնաց յանուն շինութեան գումար . . . 28801 59

Աւելացրած մնացորդը շարժական գումարից 3073 22

Ընդամենը շինութեան գումար 31874 81

Գ. ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ԳՈՒՄԱՐ

(Նուիրաբերութիւններ բարերարաց)

1. Յովսէփու Էփէնդեանց . . 71928 —
2. Եկատերինէ Ռոտինեանց . . 400 —
3. Վարդանայ Եղիազարեանց . . 100 —
4. Եսայի Տէր-Դաւթեանց . . 1900 —
5. Սողոմոնի Վարդանեանց . 4100 —
6. Ընծայաբերութիւն հայ հասարակ. Թիֆլիզի ի յիշատակ Մակար Կաթուղիկոսի 3600 —
7. Մինասայ Սամուէլեանց . . 2630 —
8. Վարդանայ Երուսալիմսկւոյ. . 5600 —
9. Օթարայ Նաղբաթեանց . . 200 —
10. Եսայեայ Արք. Աստուածատրեանց. 6500 —
11. Գրիգորի Շիոյեանց . . . 5400 —
12. Մայիայի Փուղինեանց. . . 700 —
13. Մարիամու Սերեդենկօ . . 800 —
14. Նաքարայ Եարալեանց. . . 1023 —
15. Յովհաննիսի Անանեանց յանուն Յարութիւն վարդապետի Ալամդարեանց . 5217 20
16. Նունէի Ղամբարեանց. . . 3112 40
17. Ալէքսանդրի Թայիրեանց . . 1659 20
18. Գէորգայ Փրիդոնեանց. . . 5240 —
19. Յարութիւն Գրիգորեանց . . 6457 20
20. Ընծայաբերութիւն յանուն Յովհաննէս քահանայի Սարգսեանց . . 1222 —
21. Գրիգորի Թումայեանց. . . 5107 —



22. Եկատերինէ Մէլիք-Շահնազարեանց Դէ-Շապուր . . . . . 2000 —
23. Ստեփանայ Գէորգեանց . . 5000 —
24. Նունէի Եւանգուլեանց . . 10200 —
25. Գրիգորի Մեղուինեանց . . 6000 —
26. Ստեփանայ Խիթրով . . . 21000 —
27. Երգչաց խմբին նուիրած տոմս ներք. խաղարկութեան . . . . 100 —

177196 —

Այս գումարների տոկոսներովը պահպանւում են որդեգրներ և չքաւոր աշակերտներ։

Դ. ՕՏԱՐԱՊԱՏԿԱՆ ԳՈՒՄԱՐ

Գրաւական կապալառուներից . . 17134 89

Ե.

Սեփհականութիւն ուսուցչական փոխատու խնայողական գանձարանի 4 տոմսք I և II վիճակահանութեան հանդերձ գոյացեալ տոկոսիւք . , . . . 400 —

Առ 1-ն Յունուարի 1899 ամի գանձարանումը կար տոմսերով . . . 224918 75

Կանխիկ դրամ . . . . (1686 95)

Զ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԴԻՒԱՆԱՏՈՒՆԸ

| | |
|---|---|
| Թուղթ եկեալ | 885 |
| » ելեալ | 1219 |
| Կազմած գործեր | 54 |
| Օրագրներ | 42 |
| Հոգաբարձական ժողովներ | 45 |

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС Библиотека
ՀՍՍՀ-Арм ССР
им А Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

24
1213
20821
ՀՀ Ազգային գրադարան
NL0055776